

դանի բարբառով լսած ըլլալ «Սըսայ երկրիս» «լուսատու աստղին» եւ քաջ «պահպանի» մասին: Հաւանորէն երգած է 1438ին եւ իբրեւ նուէր ուղարկած Կոստանդին կաթողիկոսին:

ԲՆԱԳԻՐԸ

Տաղիս ձեռագիրը, ուսկից առած է Հ. Ա. լիւ- շան, անծանօթ է ինձ: Ձեռագրաց մէջ եր- կրորդ օրինակի պատահած չեմ:

Հրատարակուած է չորս անգամ. հին- գերորդը պիտի ըլլայ մեր հրատարակութիւնը:

Առաջին անգամ լոյս տեսաւ Բ ա ղ մ ա- վ է պ, 1863, էջ 376. ասկէ արտատպուած Յուշիկը, Բ., 510—511 = A:

Երկրորդ անգամ՝ Ս ի ս ու ա ն, էջ 226. հոս դուրս ձգուած են Գ. Գ. եւ Չ. տուները. իսկ «Թուրք» անունը շրջուած է «Ուրթը» = S:

Երրորդ անգամ՝ Կ. Կոստանեանց, Յովհ. Թիւրքանցի եւ իւր տաղերը. Թիֆլիս 1892, էջ 57—59 (Յուշիկէն):

Չորրորդ անգամ՝ Հ ա յ ա պ ա տ ու լ մ, էջ 541 (մեծադիր) Յուշիկէն = H:

ՏԱՂ Ի ՔԱՋՆ ԼԻՊԱՐԻՏ

Հողովորդ սուրբ ես եւ ամբիծ, Ձքեղ էր ընտրեալ Տէրն ի յերկնից. Պարծանք եղեր քրիստոնէից, Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Անձամբը քաջ Սամփոտն էիր, Յորժամ ճօշանը հազնէիր, Թուրքն ի յահէդ դառնայր մոխիր. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Արեգական նըման պայծառ, Երեսը լոյս էր կամար. Բարձրը բարի, խօսքը շաքար. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Բնութեամբ բարի դէմ աղքատաց, Լըսող էիր վարդապետաց, Քո բանդ յամէն երկիր գոված. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Ձանձնը արէիր վասն օրինաց, Մէն կանգնելով հազրի դիմաց, Քու սուրբը շատ սրտեր իբաց. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Խորագիր չունի Ձեռագիրը: 2 A տէր: — 7 A դառնար: — 11 H խրատը: — 15 A ամէն: — 19 Բուր տպագիրը «արտեր». պէտք է կարգալ «սրբատեր». տպագիրը «երաց». բայց H կը յայտնէ թէ «ի բաց» ունի Ձեռագիրը, կարգալ «իբաց»:

Դու հազարաց դէմ պահպան, Մարդ չէ տեսեր քեզիկ նըման. Այս հողածինքս որ յերկրի կան. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Սըսայ երկրիս աստղ լուսատու, Կանգնող էիր յամէն ժամու. Թուրքն ի յահէդ սարսէր մահու. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Այն չար պահիկն որ քեզ հասաւ, Քեզի օգնող չըկայր բընաւ. Անձնը կարմիր գոյն ներկեցաւ. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Ձայն չարաչար մահն որ տեսար, Կրակի՛ծ է մօրն որ դուն ծընար. Աւա՛ղ ըզքեզ բերան հազար. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Սըսայ երկրին պաղչա ու ծառ, Գոյնք ի դունաց ծաղկունք որ կայր, Հառաչանօք առին զիրար. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Կաթողիկոս եւ վարդապետ, Սուրբ քահանայք ամէնն ի հետ. Շատ արտասուօք սրտերն երեւ. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Հիւսիսային հողմըն հիմիկ, Մարդիս յիշող եղաւ քեզիկ. Դուն սիւն էիր Հայոց մեզիկ. Ո՛վ մեծ հըզօր քաջ Լիպարիտ:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ՀԱՅԵՐԸ ՄԵՐԳԵԹՈՍԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԷ

5. ՀԱՅՈՅ ՔԹԻՆ ՅԱՏԱՆԻՇԸ

Դէմքի մարդախօսական կարեւոր անդամ- ներէն է քիթը. անոր համեմատութիւնը հաս- տատուն տուեալներ կ'ընձեռէ մեզի, որոնք ժառանգական բնոյթն ունին ինչպէս մազ եւ աչք: Քիթին վրայ չորս կէտ կարելի է նկա- տել՝ 1. երկայնութիւնը, 2. լայնութիւնը, 3. արմատը եւ 4. քամակը: Առաջին եր-

41 SK կաթողիկոսը: 48 AH ունին հոս իբրեւ երգին շարունակութիւն «Է Աստուծոյ անուն օրհնած» տաղին Ա.—Գ. տուները:

կուքը, որոնք չափական մեթոդով կը ստա- ցուին, կու տան քիթանիշը. մինչ երկու վեր- ջինները դուռ գննական են: Քիթի չափերը, լաւագոյն՝ ցուցիչները անհատական շատ մեծ փոփոխութեան ենթակայ են. թէեւ շօշափելի իրողութիւններ եւ շատ ամուր կուտաններ կու տան մեզի ժողովուրդներու դասաւորման համար, միայն թէ հոս առաւելագոյն շե- տուած է մեծագոյն քանակութեամբ ուսում- նասիրութիւններ ընելու հարկը: Հնդիկ ժո- դովուրդի օրինակը բաւական է ապահովելու գմեղ այս տեսակէտէ. Հոլանդի¹ կազմած տախտակին համաձայն՝ Հնդկաստանի երեք ժողովուրդները՝ Բէհարբահման, Գոալա եւ Խամար, որոնք դասակարգային արգելքին պատճառաւ դարեր շարունակ կղզիացած ու անհաղորդ մնացած են իրարմէ, քիթանիշի բո- լորովին տարբեր յաճախութիւն կը ցուցնեն. մինչ առաջինը իւր բարձրակէտն ունի իբր 67°50 (քիթանիշ), եկրորդը կ'ունենայ 77°50, եւ երրորդը՝ 87°50: Քիթի ցուցիչը սակայն ամէն տարիքի մէջ նոյն չի մնար. մանուկնե- րու քով քիթի երկայնութիւնը լիովին աճած չըլլալով ցուցիչը միշտ բարձր թիւ մըն է, որ սափակ քիթ կը նշանակէ: Քիթի ցուցիչները որոշ աշխարհագրական բաժանում մը կը ցուցնեն. Եւրոպայի, Կովկասի եւ քանի մը հնդկական տիպերու քով երեւան կու գայ նրբաքիթը. մինչ միջաքիթը կը գտնուի գլխա- ւորաբար Կենդրոնական Ասիա, Հնդկաստան, հիւսիսային Ափրիկէ եւ Ամերիկա. տափակ քիթը յատուկ է արեւելեան ասիացիներուն եւ դրացի կղզեբնակներուն, ինչպէս նաեւ օտրի- կեցի խափշիկներուն:

Հայերը իրենց տիպին առանձնայատուկ շեշտեալ քիթ մը կը ներկայացնեն. անոնք ա- ուաւելագոյն նրբաքիթ են. քիթի երկայնութեան համեմատութեամբ քիթի թեւերուն անջրպետը շատ փոքր է: Պանդիւխով (յիշած Մարտին²) կը դնէ 60°4. այս նուրբ քիթը Հայոց քով ոչ նուազ քան 94% յաճախութիւն ունի (Քուր- տերու քով 95%): Շանտր³, զոր կը նախըն- տրենք յիշել իւր մանրամասնութեան համար, 64°8 կը նշանակէ 341 հայերու իբր քիթանիշի միջին արժէքը, որուն կը համապատասխանէ 54 հզրդմ. բարձրութիւն, 35 հզրդմ. տրա- մագծով: Վերը նկատեցինք թէ քիթանիշն ան- հատական շատ լայնածաւալ փոփոխութեան

ենթակայ է. այդ պատճառաւ քիթանիշի միջին արժէքը չի պատկերացներ անոր իրական յա- ճախութիւնը. մանաւանդ որ Հայոց քով դա- ւառական տիպերու անհամեմատ գերակշռու- թիւն կը տիրէ, այսպէս Նախիջևան քիթանիշն է հազիւ 58°61 (սաստիկ նուրբ), մինչ Շուշի 70°37 (միջաքիթ)⁴: Ամէնէն յաճախագէտն է 63°00—66°00, առաջինը՝ մասնաւորապէս Դիլ, Տաթեւ, Իգդիր, եւ երկրորդը՝ Ղիրուսի, Գարաքիլիսա, Թիֆլիս: Կանանց քով, որոնք միշտ տարբերութիւն մը կը ցուցնեն, քիթ- նիշն է 65°30, համապատասխան 55 մմ. բարձ- րութեամբ եւ 32 մմ. լայնութեամբ: Ամբողջն 4 հետեւեալ հարիւրական համեմատութիւնը կը ներկայացնէ՝ 341 հոգիէն 58=17% անդրնրբա- քիթ, 176=52% նրբաքիթ (որ կը խաղայ 60°00—69°90ի մէջ, գլխաւոր վայր՝ Երեւան, Ադուլիս, Թիֆլիս), 94=27% միջաքիթ, եւ 13=4% տափակ քիթ: Նրբաքիթի թուական ստակութիւնը ցայտուն է:

Վրացի մարդախօսը՝ Պրոֆ. Ջաւախիշ- վիլի աւելի փոքր քիթանիշ մը կը գտնէ 721 ան- հատներու համար, որ կը ցուցնէ թէ Հայերն ստուար մեծամասնութեամբ նրբաքիթ են: Ահաւասիկ համեմատութիւնը. 78% նրբա- քիթ, 20% միջաքիթ, 2% տափակքիթ, միջին արժէք 62°60⁵: Նոյնը կը հաստատեն Փր. Բոասի տուեալները, որ 75 ասիածին այրերու քիթ բարձրութիւն կը նշանակէ 56°4 մմ., լայ- նութիւն 37°2 մմ., առաջինին 4°9 մմ., եր- կրորդին 2°9 մմ. խաղացման անջրպետով բարձրութեանէն եւ լայնութեանէն իբր ցուցիչ կը ստանանք 67°00. ամերիկացիներու համար 63°74⁶: Հայ կանանց քիթանիշը կը գտնենք 64°29, համապատասխան 52°1 մմ. բարձրու- թեամբ, 33°5 մմ. լայնութեամբ (ամերիկացիներն հայուհիներուն քիթանիշ՝ 62°80): Մեր հա- չիւնները կը ցուցնեն 63°38 իբր քիթանիշի միջին արժէք, 60 մմ. բարձրութեամբ, 37 մմ. լայ- նութեամբ: Պոն էրքէրտի չափերուն համա- ձայն կովկասցի 21 հայերու քիթանիշն է 64°61⁷: Ռուսմանահայերու վրայ կատարած է. Պի- տարի⁸ չափերը կու տան իբր քիթանիշ 66°06, որուն հարիւրական բաժանումն է՝ 69 հոգի = 55% նրբաքիթ, 56 հոգի = 45% միջաքիթ, կը բացակայ տափակ քիթը: Հետեւեալ հա-

⁴ Recherches, p. 42—43. ⁵ Arch. f. Anthr., 1925, S. 86—87. ⁶ Zeitschr. f. Ethn., 1924, S. 77—79. ⁷ Erckert, Arch. f. Anthr., 1891, S. 243. ⁸ Bull. soc. scien. Roum., 1912, p. 364.

¹ Martin, Lehrbuch, S. 453. ² Martin, Lehrbuch, S. 447, 449. ³ Recherches, p. 41.

մեծատուրթիները կը ներկայացնեն ոռու մար-
դախուսները⁹ Հայոց քթանիշի համար .

ՔՊԱՆԻՇ	Տվարեւորութիւն	Մասերով
43—60	70.5%	47.3%
61—70	25.7%	41.1%
71—80	3.8%	8%
81—90	—	3.6%

Այս բոլոր տուեալները կը ցուցնեն թէ,
ինչպէս առ հասարակ մարդկութեան մէջ,
նոյնպէս մասնականին Հայոց քով քթանիշն
անհատական լայն ասպարէզ ունի, թէեւ
դժուար չէ մանաւանդ հայորդիներու համար
ընդհանուր միջին արժէք մը գտնել, որ հա-
մապատասխանէ ժողովուրդին քթային յատ-
կանիչին: Այդ հաշուով Հայերը պէտք է դա-
տուին ամէնէն նրբաքիթ ժողովուրդներու
կարգին, համադաս հիւսիսային փրանսացի-
ներու (քթանիշ 63.4)¹⁰:

Հայոց այս շեշտուած նրբաքիթութեան
պատճառը դժուար չէ տեսնել. մեր յառաջ-
բերած չափերը ցուցուցին թէ ոնգունքի եր-
կու թեւերուն անըրպետը բաւական մեծ է
Հայոց քով, բայց աւելի աչքառու է քթի եր-
կայնութիւնը, որուն համեմատութեամբ լայ-
նութիւնը փոքր կ'երեւայ¹¹:

Գալով միւս յատկանիչներուն՝ Հայոց քով
առ հասարակ բարձրարմատ քիթը կ'իշխէ.
ճակատէն դէպի քիթն անցնելու համար թե-
թեւ մը կը խորանայ արմատը, երբեմն ուղ-
ղակի կ'իջնայ: Քթի քամակին ուսուսմասի-
րութիւնը շատ աւելի կարեւոր է, վասն զի
ուղղակի յատկանշական դժեր կը բովանդակէ,
մինչեւ իսկ յատկապէս հայկական քիթ կո-
չուելու չափ: Ուսուցիկ քամակը, կոչուած
նաեւ արծուէքիթ կամ կոտմնիկէ, առանձնա-
պէս յաճախաբար է Հայոց քով. թէեւ ստէպ
սեմական ժողովուրդներու, մասնաւորաբար
Հրեաներու հետ կապի դրուած է, սակայն
Ֆիլիպինցի քննութիւններու համաձայն կոտ-
մնիկէ քիթը նիւեորքցի 2836 հրեայ այրերու
եւ 1284 կիներու քով հազիւ առ հարիւր 12.7
կարելի է ցուցնել¹²: Միւս կողմէ սակայն այդ
ուսուցիկ քիթը հայորդիներու հասարակաց՝

աղղային նշան մը չ'երեւար. Շանտր իւր չա-
փած Հայերու վրայ միայն 42% կը գտնէ հե-
տեւեալ համեմատութեամբ՝ Շուշի 2 : 8, Դիլի
3 : 12, Ղիրուսի 14 : 28, Տաթեւ 10 : 17, Ագու-
լիս 1 : 15, Նախիջեւան 6 : 10, Գէմէրլու 2 : 6,
Երեւան 12 : 27 եւն¹³: Յր. Բոսա կը վարանի
իրաւամբ ընդունիլ թէ Հայոց քթին ձեւման
արտաքին արուեստական միջոց մը կ'օժան-
գակէ. ինքը հարցուցած է նիւեորքարնակ
Հայերու, որոնց համաձայն դայեակը նորա-
ծին մանկան քթոսկրը կը սեղմէ, որով ոսկր-
ները իրարու կը մերձենան, «սակայն հաւա-
նական չէ, կ'ըսէ, որ նման ձեւում իսուսներ
ինայուն արդիւնք ունենան»¹⁴: Մենք եւս
հիմնեալ չենք գտնել այդ սովորութիւնը, որ
ակազական հանգամանք մը պիտի ունենայ,
վասն զի կոտմնիկէ քիթը կը տեսնուի նաեւ
Եւրոպա եւ Ամերիկա ծնած հայերու քով ալ,
որոնք չենք կրնար մտածել թէ նման անբնա-
կան դործողութեան մը ենթարկուած ըլլան:
Մանուկ Տէր Ալեքսանեան (Բալուէն) կը
պատմէ թէ Հայերը, անտարակոյս իր ծննդա-
վայրին մէջ «մանկան քիթը ծնանելէն անմի-
ջապէս կոտմնիկէ կը ձեւեն, վասն զի՞, կը յա-
ւելու, այդ ձեւը սիրելի է Հայերուն»¹⁵: Այս
սովորութիւնն այլ տեղ մեզի ծանօթ չէ:

Քթին ծայրը նոյնպէս յատկանշական է,
որ Հայոց քով դրեթէ միշտ կ'ըլլէ, երբեք
սրածայր¹⁶: Յ. Վենինգեր¹⁷, որ կրցած է
օգտագործել Պրոֆ. Բէօօհի ուսուսմասիրու-
թեան անտիպ աշխատութիւնները, հետեւեալ
պատկերը կու տայ մերձաւոր ասիական՝ այս-
ինքն հայաստիպ քթին. «Քթի արմատ՝ մի-
ջակ, նեղ. քթի քամակ՝ միջակնեղ եւ ուռու-
ցիկ նաեւ հարթ. քթի ծայրը յաճախ սաստիկ
կրբեմն թեթեւ կ'որ. հազուադէպ չէ նաեւ, որ
մերձաւոր ասիական (այսինքն՝ հայաստիպ)
քիթը դէպի դմբեթը թանձրամիս ըլլայ. քթին
թեւերը՝ բարձր, թեթեւ կամ արածեւ. երբեմն
ուղիղ, քթին միջնորմ՝ աւելի վար ցցուած,
երբեմն հորիզոնական»:

Հայոց դիմազծի ամբողջութեան համար
յաջորդ տողերու մէջ համառօտիւ կու տանք

¹³ Recherches, p. 41.
¹⁴ Zeitschr. f. Ethn., 1924, S. 75.
¹⁵ M. Der Alexanian, When I was a boy in Ar-
menia, Boston. «Immediately after the birth, the child's
nose is shaped to give it the form of an eagle's beak,
because this shape is liked by the Armenians», p. 74.
¹⁶ Chantre, Recherches, p. 242. Pittard, Bull.
soc. scien. Roum. 1912, p. 365.
¹⁷ J. Weninger, Mitteilungen d. Geogr. Ges. in
Wien, 1920, Bd. 63, 1/2, S. 18.

⁹ Journ. russe d'Anthr., 1926, t. 15, p. 23.
¹⁰ Chantre, Recherches, p. 43.
¹¹ C'est donc plutôt par la longueur de leur
nez qui atteint souvent 60 mm et même plus, que par
l'étréouiture de leurs narines que les Arméniens pré-
sentent ce caractère aussi marqué. Recherches, p. 43.
¹² Martin, p. 458.

դէմքի միւս անդամներու եւս մարդախօսա-
կան կէտերը, ուր բնական է պիտի չփնտռենք
նկարչական հայր կամ հայկական գեղեցիկու-
թիւնը, այլ հայ ժողովուրդի մէջ մարդախօ-
սական տիրող գծերը:

«Հայոց քով բերանն աւելի փոքր է քան
մեծ» ըստ Շանտրի բացատրութեան, ինքը կը
գտնէ 48 հզրդմ. միջին երկայնութիւն այրե-
րու եւ 45 հզրդմ. կիներու համար¹⁸: Ջա-
ւախիշիլիլի¹⁹ ունի 50 հզրդմ. որ երեսի լայ-
նութեան հետ համեմատուած՝ 34.5 ցուցիչ
կու տայ: Մեր չափածներուն մէջ 4 հատ
միայն 50 հզրդմ. էն փոքր կայ, միւսները ա-
մէնէն ալ մեծ են: Հայոց չրթունքները առ
հասարակ բաւական նուրբ են, մանաւանդ
Մեղրիի խումբին քով, թէեւ հազուադէպ չեն
նաեւ հաստաչուրթն հայեր:

Հայոց ականջը բնականոն աճած է, յա-
ճախ մեծ քան փոքր. Փրանսացի մարդախօսը
341 հոգւոյ վրայ գտած է 60 հզրդմ. միջին
երկայնութիւն 35 հզրդմ. լայնութեամբ: Լայ-
նութիւնն աւելի հաստատուն է, մինչդեռ եր-
կայնութիւնը շատ փոփոխական. Իզդիր հա-
զիւ 55 հզրդմ. երկայն է, մինչ Դիլի 64, Նա-
խիջեւան եւ Գէօլ 63: Այս փոփոխութիւնները
ակնյայտնի արդիւնք են տեղացիներու կրած
գլխանոցին: Ստոյգ է թէ փափախի գործա-
ծութիւնը եւ զայն կրելու կերպը յաճախ ա-
կանջի վերի բոյթը (lobe) կ'այլափոխեն եւ
կ'իջեցնեն մինչեւ իսկ երբեմն մէկ երրորդ
կարճեցնելով²⁰:

Հայոց աչքերու ներքին անկիւններու ան-
ջրբարձր Ջաւախիշիլիլի²¹ 139 հոգւոյ համար
կը դնէ 32 հզրդմ., մեր չափերը կու տան 30
հզրդմ., մինչ Շանտր 28 հզրդմ. կը գտնէ մե-
ծագոյն բազմութեան մը համար իբր շատ հաս-
տատուն միջին արժէք. այս պարագան կը
ցուցնէ որ Հայոց աչքերը առ հասարակ իրա-
մատը շատ տարածուն չէ: Մինչ աչքերու ար-
մատին անկիւններու անըրպետը համեմատա-
բար մեծ է, թէեւ միջին մեծութիւնը բարձր
չէ, եւ շատ փոփոխական է վայրէ վայր: Պէտք
է շեշտենք որ Հայոց աչքին վրայ երբեք չ'երե-
ւար մոնգոլական ծալքով կոպը, որ ապացոյց
է մոնգոլական արեան բացակայելուն:

Հայոց աչքին գունդը առ հասարակ մեծ է

¹⁸ Recherches, p. 43.
¹⁹ Arch. f. Anthr., 1925, S. 84—85.
²⁰ Recherches, p. 44.
²¹ Arch. f. Anthr., 1925, S. 86—87.

եւ այդ յատկանիշը գեղագիտորէն տպաւորիչ
ազդեցութիւն մ'ունի. կապոյտ աչքը գեղեցիկ
է իւր փայլով, բայց սեւ ու մուրթ աչքերը
աւելի ցոլացող փայլ մ'ունին, ուր մուրթ գոյնը
անյատակ խորհրդաւորութիւն կու տայ:

6. ՀԱՅՈՑ ԳԼԽԻ ԵՒ ԳԱՆԳԻ ԾԱՆՈՒՑԻՉՆԵՐԸ

Գլխի եւ գանգի ուսուսմասիրութիւնը՝
մարդախօսութեան մէջ շատ կարեւոր տեղ կը
գրաւէ, վասն զի անոնց ծանուցիչները հաս-
տատուն կուսանեն կ'ընծայեն մեզի, որով
կրնանք բարձրանալ հնագոյն ժողովուրդներու
մարմնակազմիկ յատկանիչներուն: Դամբան-
ներու մէջ պահուած հնագրեան գանգերը,
ժայտերու վրայ քանդակուած գլուխները այս
տեսակէտէ նոր գննութեան մ'առարկայ կը
գաւնան եւ կամուրջ կը կազմեն ցեղային ծա-
ղումի յարաբերութիւնները ճշգրտելու:

Թէ գլխի եւ թէ գանգի վրայ չափական ու
գննական անհամար հնարաւորութիւններ կան,
բայց մենք կը գոհանանք միայն կարեւորա-
գոյններուն անդրադառնալով, վասն զի չա-
փազանց փոքր մանրամասնութիւնները կը
մթաղեն աւելի եւ կը դժուարացնեն լուծումը:
Նկատի առնուած չափերն են՝ գլխազանգի
մեծագոյն երկայնութիւնը, լայնութիւնը եւ
բարձրութիւնը, նաեւ ուղեղի ընդունարանին
տարողութիւնը (գանգի վրայ). գննական էա-
կան կէտերն են յետագլխի ու ճակատի
ձեւերը. դէմքի վրայ կը նկատենք երկայնու-
թիւնն ու լայնութիւնը:

Գլխազանգի չափերը բնական օրէնքով
իրարմէ կ'ազդուին, վասն զի ինչպէս ցու-
ցուած է, գանգի չափերը ուղեղի զարգացու-
մէն, եւ սա իւր կարգին հասակի մեծութենէն
կախում ունի: Ուստի պարզ է եզրակացնել
թէ երբ գանգի երկայնութիւնը չի զարգանար
համեմատական չափով, ըլլայ կենսաբանա-
կան, ըլլայ արտաքին արուեստական պայման-
ներու տակ, պիտի զարգանայ անոր լայնու-
թիւնն ու բարձրութիւնը, որպէս զի կարենայ
գետեղուիլ ուղեղի զանգուածը: Եւ ահա բա-
ցարձակ չափերու այդ համեմատական զար-
գացման մէջ երեւան կ'ըլլէ ցեղային գլխաւոր
մէկ յատկանիշը:

Գլխի մեծագոյն երկայնութիւնը (größte
Kopflänge, diamètre antero-postérieur maxi-
mum) կը չափուի կմտիկ (Glabella, point gla-
bellaire) կոչուած կէտէն մինչեւ գլխին յետ-
սակողման ամէնէն հեռաւոր կարկառումը իբր
տրամագիծ: Գլխի մեծագոյն լայնութիւնը

(größte Kopfbreite, diamètre transversal maximum) կը նշանակէ գլխու լայնութեան մեծագոյն հեռաւորութիւնը հորիզոնական դիրքի մէջ, նոյնպէս իբր տրամագիծ¹: Գլխագանգի երկայնութիւնն ու լայնութիւնը այն էական բացարձակ չափերն են, որոնցմէ կը ստանանք ըստ ցուցիչներու $\frac{\text{լայնութիւն} \times 100}{\text{երկայնութիւն}}$ բանաձեւին՝ գլխանիշը (Kopfindex, indice céphalique), որ է լայնութեան համեմատութիւնը երկայնութեան հետ: Գլխի չափերը, հետեւապէս եւ ցուցիչները մորթի, մազի, մկաններու ու ճարպային խաւի պատճառաբանական է՝ աւելի մեծ են քան գանգի չափերը. երկայնութեան եւ լայնութեան համար առ հասարակ 1—1.50 հըղմ. տարբերութիւն կ'ընդունուի:

Այս փոքրիկ նախաձանօթութենէն ետք հիմայ տեսնենք Հայոց գլխուն տրամագծերն, ցուցիչներն, եւ նախ մեծագոյն երկայնութիւնն ու մեծագոյն լայնութիւնը գլխի:

Հայոց գլխի մեծագոյն երկայնութեան համար կը ստանանք հետեւեալ պատկերը միութիւն աններով Լեբցելտեր-Սալլերի² կազմած բաժանումը.

ՀԱՅՈՑ ԳԼԽԻ ՄԵՆԱԳՈՅՆ ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆԸ

	Հանար ³	Բոսս ⁴
X—169 հըղմ. (չատ կարծ)	8	—
170—177 „ (կարծ)	51	5
178—185 „ (միջակ)	136	28
186—193 „ (երկար)	72	37
194—X „ (չատ երկար)	25	14

Քիչ մը տարբեր աստիճանաւորութեամբ հետեւեալ համեմատութիւնը կը գտնենք ուս մարդախօսներու⁵ քով.

	Տվարեանովէ	Էրկրան	Ընտրով
X—170 հըղմ.	1.9%	3%	5.3%
171—180 „	44.8%	43%	40.7%
181—190 „	43.8%	49%	51.3%
191—X „	9.5%	5%	2.7%
Միջին	181.78	181.0	179.0

Աւելի միաձոյլ կ'երեւան Պիտարի արդիւնքները ուսմանահայերու վրայ. 175—179

¹ Martin, Lehrbuch, S. 157—168.
² K. Saller, Leitfaden der Anthropologie, Berlin 1930, S. 50.
³ Recherches, p. 53—66.
⁴ Zeitschr. f. Ethn., 1924, S. 77—78.
⁵ Journ. russe d'anthr., 1926, p. 18; 1907, p. 171.

հըղմ. 10 հոգի, 180—184 հըղմ. 86 հոգի, 185—190 հըղմ. 28 հոգի⁶:

Իզական սեռը ինչպէս հասակի նոյնպէս գլխի երկայնութեան կողմէ տարբերութիւն կը ցուցնէ. Լեբցելտեր-Սալլերեան⁷ համապատասխան տախտակի համաձայն հայուհիներու համար կ'ունենանք.

	Հանար ⁸	Բոսս ⁹
X—161 հըղմ. (չատ կարծ)	—	—
162—169 „ (կարծ)	3	5
170—176 „ (միջակ)	23	22
177—184 „ (երկար)	19	29
185—X „ (չատ երկար)	4	12

Նախորդ տախտակները կը ցուցնեն, որ Հայոց գլխիւր երկարութեան տեսակէտէ բաւական լաւ զարգացած է. մեծագոյն յաճախութիւն կը տեսնուի միջակ երկար գլուխներու քով, որոնց համեմատութիւնը մինչեւ 45—50% կը հասնի. յետոյ կու գան երկար գլուխները թուական մեծագոյն համեմատութեամբ քան կարծ գլուխները:

Սակայն նոյնքան եւ աւելի լաւ զարգացած է գլխի լայնութիւնը Հայոց քով. ահաւասիկ Լեբցելտեր-Սալլերեան¹⁰ տախտակին համաձայն այդ չափը.

ՀԱՅՈՑ ԳԼԽԻ ՄԵՆԱԳՈՅՆ ԼԱՅՆՈՒԹԻՒՆԸ

	Հանար ¹¹	Բոսս ¹²
X—139 հըղմ. (չատ նեղ)	—	—
140—147 „ (նեղ)	20	1
148—158 „ (միջակ)	98	22
159—163 „ (լայն)	133	44
164—X „ (չատ լայն)	41	17

Ըստ ուս մարդախօսներու¹³ հաշուոյն.

	Տվարեանովէ	Ընտրով	Էրկրան
144—146 հըղմ.	—	3.5%	8%
147—150 „	7.6%	19.5%	
151—155 „	24.8%	33.6%	60%
156—160 „	41.9%	32.7%	
161—170 „	24.8%	10.7%	30%
171—X „	0.9%	—	

⁶ Bull. soc. scien., 1912, p. 351—352.
⁷ K. Saller, Leitfaden, S. 50.
⁸ Recherches, p. 53—66.
⁹ Zeitschr. f. Ethn., 1924, S. 78—79.
¹⁰ Leitfaden, S. 50.
¹¹ Recherches, p. 53—66.
¹² Zeitschr. f. Ethn., 1924, S. 77—78.
¹³ Journ. russe d'anthr., 1907, p. 171; 1926, p. 19.

է. Պիտարի¹⁴ համաձայն 148—155 հըղմ. 50, 156—163 հըղմ. 63 մարդ կայ. մեր հաշիւները կը ցուցնեն 3 նեղ, 13 միջակ, 11 լայն եւ 3 շատ լայն գլուխներ:

Հայ կիներու համար կ'ունենանք հետեւեալ գլխի լայնութիւնները.

	Հանար ¹⁵	Բոսս ¹⁶
X—134 հըղմ.	2	—
135—141 „	4	1
142—149 „	22	24
150—157 „	14	34
151—X „	7	9

Երկայնութեան ու լայնութեան բացարձակ մեծութիւններու նախորդ տախտակներն ակնյայտնի կը ցուցնեն, որ Հայոց քով այդ երկու մեծութիւններն ալ կանոնաւոր զարգացած են. եթէ երկայնութեան չափերը տեղ տեղ աւելի քիչ աճած կ'երեւան՝ անոր պատճառը յետագլխի տեղական տախտակութիւնն է: Սակայն ակնարկ մը կը բաւէ համոզուելու թէ լայնութեան մեծութիւնները յարաբերաբար աւելի մեծ զարգացում կը ցուցնեն, մինչ օրինակ Շանտրի քով միջակէն բարձր երկար գլուխներու թիւն է 97, նոյնպէս միջակէն վեր լայն գլուխները կ'ըլլան 174: Նոյնպիսի անհաստատարակչութիւն կը գտնենք նաեւ միւս մարդախօսներու չափերուն մէջ: Հայ գանգերու վրայ եղած ուսումնասիրութիւնները կը հաստատեն այս պարագան. ահաւասիկ հայ գանգերու երկայնութեան եւ լայնութեան չափերը.

ՀԱՅՈՑ ԳԱՆԳԵՐՈՒ ՄԵՆԱԳՈՅՆ ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆԸ

	Բանակ ¹⁷	Ք. Ուոլլերի ¹⁸	Հանար ¹
X—158 հըղմ.	—	—	2
159—167 „	18	9	10
168—175 „	51	11	8
176—183 „	33	15	1
184—X „	3	8	1
Թիւ	105	43	22

¹⁴ Bull. soc. scien., 1912, p. 352.
¹⁵ Recherches, p. 53—56.
¹⁶ Zeitschr. f. Ethn., 1924, S. 78—79.
¹⁷ V. Bunak, Crania Armenica, Moskwa 1927, p. 238—241.
¹⁸ V. Giuffrida-Ruggeri, Contributo all' antropologia fisica delle regioni dinariche e danubiane e dell' Asia Anteriore, Firenze 1908, p. 42—45.
¹⁹ Recherches, p. 72—73, 229—230.

ՀԱՅ ԳԱՆԳԵՐՈՒ ՄԵՆԱԳՈՅՆ ԼԱՅՆՈՒԹԻՒՆԸ

	Բանակ	Ք. Ուոլլերի	Հանար
X—129 հըղմ.	—	2	1
130—137 „	4	12	4
138—145 „	55	21	8
146—153 „	43	7	9
154—X „	3	1	—
Թիւ	105	43	22


Ինչպէս կը տեսնուի լայն գանգեր աւելի շատ են, մանաւանդ Բոննակի ժողովածոյին մէջ, քան երկար գանգեր, ինչ որ կատարելապէս կը համաձայնի Հայոց գլխին վրայ գտած մեր արդիւնքին հետ: Այս կէտը աւելի դուրս կը ցայտէ երբ երկայնութիւնն ու լայնութիւնը համեմատութեան դնենք ըստ ցուցիչներու օրէնքին:

Ինչպէս ծանօթ է գլխի ցուցիչը՝ գլխանիշը կը ստացուի հարիւրով բազմապատկուած լայնութիւնը՝ երկայնութեան վրայ բաժնելով. արդ երբ Հայոց քով գլխի լայնութիւնը համեմատաբար աւելի զարգացած է՝ նոյն համեմատութեամբ նաեւ բարձր քանորդ մը կը գտնենք, որ հաւասար է կարգադրութեան: Ու այս կարգադրութիւնը կը տեսնենք մարդախօսներու Հայոց համար դրած գլխանիշի միջին արժէքի մէջ: Պանտուխով²⁰ 116 հայերու համար գլխանիշը կը նշանակէ 86.30, գրեթէ նոյնը՝ 86.50 կը գտնէ Ջաւախիչի²¹ 428 հայերու վրայ, Շանտրի²² մէկ ամբողջութեամբ աւելի փոքր՝ 85.14 կը գնէ 341 հայերու համար. Յր. Բոսս²³ 54 ասիածին հայուհիներու միջին գլխանիշը գտած է 86.20 (անցողակի ըսենք որ կիներն միշտ աւելի կարճագլուխ են), իսկ 75 ասիածին այրերու համար 85.60, Շանտրի նշանակածին շատ մօտ եւ որ ուղղակի կը համաձայնի Պիտարի²⁴ 124 ուսմանահայերու տուած 85.69 գլխանիշին հետ: Իսկ Լուչան²⁵, որ ինչպէս ծանօթ է մեծ մասով սիւրիարեակ հայեր չափած կամ չափելու տուած է, 136 հոգւոյ համար 88 գլխանիշի վրայ ամենամեծ յաճախութիւնը կը գտնէ. պարզ է թէ իր տուած այդ համեմա-

²⁰ Расы Кавказа. 1900, p. 4. Deniker, Les races et les peuples de la terre, p. 717. Շանտրիէն զատ կը գնէ 278 սնդրկաւկասեան հայերու համար 85.60 գլխանիշ:
²¹ Arch. f. Anthr., 1925, S. 84—85.
²² Recherches, p. 49.
²³ Zeitschr. f. Ethn., 1924, S. 77, 78.
²⁴ Bull. soc., 1912, p. 352.
²⁵ Early inhabitants, IRAI, 1912, p. 240. Völker, Rassen, p. 144.

տուրքերը չի կրնար իբրև բուն հայկական գլխանիշ արժեք, քանի որ մեծագույն քանակութեամբ Հայեր աւելի փոքր գլխանիշ մը ցոյց

չեղանցինք, անոնք զանազան գլխանիշներու յաճախութիւնը չեն պատկերացներ, այլ կու տան ընդհանուր միջին մը, որ կրնայ շատ լաւ



կու տան ինչպէս յիշուած միջին արժեքներէն բացայայտ կը տեսնուի: Միջին արժեքի թիւերը սակայն պէտք է զմեզ գոհացնեն, վասն զի, ինչպէս անգամ մը

մինչեւ իսկ հազուադէպ ըլլալ ինքնուրոյ նիւթ ժողովուրդի քով: Ուստի մենք կրկին կը նախընտրենք Հայոց գլխանիշի այս կարեւոր ծանուցիչը զժազրութեամբ ներկայացնել՝ չա-

փերն վերակազմելով Շանտրէն, Պիտարէն, Բոասէն, Էրզրոսէն եւ մեր ուսումնասիրութիւններէն, ընդ ամէնը 816 հայ, արական սեռէ:

Այս զժազրութեան մէջ 84 գլխանիշին վրայ կը գտնուի ամենամեծ յաճախութիւնը 100 հոգւոյ համար. ինչպէս սակայն յաջորդ բարձրութիւնները ցոյց կու տան՝ 84 գլխանիշէն երկու միութիւն վար եւ չորս միութիւն վեր խոնած է հսկայ բազմութիւն մը համեմատութեամբ ծայրագոյն աստիճաններուն, այնպէս որ 82—88 գլխանիշերու վրայ կը խաղայ Հայոց մեծ մասին գլխի երկայնութեան եւ լայնութեան համեմատութիւնը: Գլխանիշներու այդ անջրպետը սակայն կը գտնուի կարճագլուխներու (81°0—85°4) եւ անդրկարճագլուխներու (hyperbrachycéphale, գլխանիշ՝ 85°5—X) մէջ, ուստի պիտի եզրակացնենք թէ Հայերը հսկայ զանգուածով կարմագլուխ եւ անդրկարմագլուխ են, մինչ միջագլուխները (mesocéphale) փոքր համեմատութիւն մը կը ցուցնեն, իսկ երկարագլուխ (dolichocéphale) հազիւ քէ կ'երեւայ: Պէտք է նմանապէս աւելցնենք թէ կարճագլուխ աւելի շատ է քան անդրկարճագլուխ: Բաց աստի եզրակացութիւնս կը հաստատեն մարդախօսներու տուած հարիւրական համեմատութիւնները. օր. Ալ. Ջաւախիշվիլի²⁶ կը դնէ 833 հայերու համար 1% երկարագլուխ, 3% միջագլուխ, 96% կարճագլուխ:

Հասկնալի է թէ հոս եւս զաւառական առանձնայատկութիւններ որոշ դեր մը կը խաղան, որ ըստ երեւոյթին շատ կարեւոր չի թուիր, դէթ յօրինուածական խոզարկութեան պակսելուն չէ կարելի բացառիկ նշանակութիւն տալ անոնց. Շանտրի²⁷ չափերուն համաձայն հետեւեալ մեծագոյն տատանումները կը տեսնուին գլխանիշի միջին արժեքի վրայ՝ Գէօլ 83°37, մինչ Ղիրուզի 87°29, միջին տեղ կը բռնեն Մեղրի (85°31), Տաթեւ (86°95), Դիւղ (86°88), Նոր Բայազիտ (86°70) եւն եւն:

Գլխի լայնութեան ու երկայնութեան հետ անոր բարձրութիւնն ալ քննութեան առարկայ պէտք է ըլլայ անտարակոյս, ուր դարձեալ կը գտնենք յարաբերապէս յատկանշական բնութիւնը զձեր ցեղերու, միայն թէ որչափ կ'երեւայ՝ ոչ այնչափ կարեւոր, որչափ նախորդ չափերը. եւ միւս կողմէ շատ դիւրին չէ կենդանի մարդկանց վրայ գլխի բարձրութիւնն

առնել չափելով ականջի ներքին խողովի արտակարկառ ոսկրէն մինչեւ գագաթի յառաջակողմեան եւ յետսակողմեան ոսկրներու հեռաւոր կարեւածքը, եւ սոյն չափին վրայէն իբրև առէջքի գտնել պլուտագորեան օրէնքով գլխի բարձրութիւնը: Մանաւանդ կարուածքի դիւտը ստէպ դժուարութիւն կը պատճառէ, ուստի յաճախ մերձաւոր հաշուով պէտք է գոհանալ: Այս է պատճառը որ աւելի մեծ կարեւորութիւն կը տրուի գլխի երկայնութեան եւ լայնութեան չափերուն եւ երկրորդական նշանակութիւն միայն կ'ընծայուի բարձրութեան²⁸:

Հայոց եւս գլխի բարձրութիւնը այն տարածութեամբ չէ ուսումնասիրուած ինչպէս նախորդ չափերը. Շանտր²⁹ չափած է միայն 62 հոգւոյ գլխի բարձրութիւնը եւ կը գտնէ իբր միջին 126 հզրդմ., որ 181 միջին երկայնութեան համեմատութեամբ կու տայ 66°85 բարձրութեան-երկայնութեան ցուցիչը. նոյնը Պիտարի³⁰ քով աւելի բարձր է՝ 69°37, համապատասխան 126°90 հզրդմ. բարձրութեամբ եւ 182°96 հզրդմ. երկայնութեամբ: Այս միջին արժեքէն դատելով Հայերը մեծ մասով բարձրագլուխ են. այդ կ'ապացուցանեն նաեւ ուսումնասիրութիւնները³¹ չափերը.

ՀԱՅՈՑ ԳԼՄԻ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գլխանիշ	Տղամարդիկ	Երեւան	Ընդամենը
112—120 հզրդմ.	12.4%	5%	12.5%
121—130	28.6%	29%	62.5%
131—140	40.9%	47%	24.5%
141—150	18.1%	17%	0.9%
151—X	—	2%	—

Ինչպէս կը տեսնուի չափուած անձինքները մեծ թուով 131 հզրդմ.էն վեր են (բացի Անսերովի արդիւնքէն). նոյնչափ բարձր միջին մը կը նշանակէ նաեւ Ջաւախիշվիլի³² 133 հզրդմ., որ անտարակոյս Իվանովսկիի բաժանման համաձայն իւր չափած անձինքներու վրայ 40% ցածագլուխ, 32% ուղղագլուխ եւ 28% բարձրագլուխ կը գտնէ: Շատ հաւանական է սակայն, որ Հայերը աւելի մեծ համեմատութեամբ բարձրագլուխ են. այդ կը ցուցնեն հայ դանդի վրայ եղած ուսումնասիրութիւնները.

²⁸ Տես այս մասին մանրամասն՝ Martin, Lehrbuch, S. 689—709.
²⁹ Recherches, p. 51—52.
³⁰ Bull. soc., 1912, p. 352—353.
³¹ Journ. russe d'anthr., 1926, p. 20, cf. p. 31.
³² Arch. f. Anthr., 1925, S. 84—85.

²⁶ Arch. f. Anthr., 1925, S. 84—85.
²⁷ Recherches, p. 51—52.

ՀԱՅ ԳԱՆԳԵՐՈՒ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ

Շանտր³³ և Ռոուլենդ³⁴ բունակ³⁵

X—123	հզորմ.	—	1	—
124—128	„	2	3	1
129—133	„	2	7	12
134—138	„	9	11	32
139—143	„	6	14	42
144—148	„	6	7	9
149—153	„	—	—	1

Թէեւ գանգի բարձրութիւնը յինքեան աւելի մեծ է քան ականջէն bregma բարձրութիւնը, սակայն եւ այնպէս պայծառ կը տեսնուի հոս եւս Հայոց շատ յատկանշական բարձրագլխութիւնը. զոր Զ.—Ռուլենդի հայ գանգերու նկարագրականը կը համարի. բաց աստի նկատուած է, որ կարճագլուխ ժողովուրդները առ հասարակ բարձրագլուխ³⁶ են, վասն զի գլխի երկայնութիւնը ստէպ իւր վերջին զարգացման չի հասնիր անոնց քով:

Գլխի երեք բացարձակ չափերն ալ, երկայնութիւն, լայնութիւն, բարձրութիւն, կրնան բարեփոխուիլ ճակատի եւ մասնաւորաբար յետագլխի ձեւէն. մասնաւոր որ այդ մեծութիւնները փոխադարձ յարաբերութեան մէջ կը գտնուին իրարու հետ, այնպէս որ միոյն, օր. երկայնութեան չաճումը առաւելագոյն զարգացում կ'առթէ լայնութեան ու բարձրութեան, պարզ կենսաբանական պատճառով որ ուղեղի գանգուածը կարենայ զետեղուիլ գանգի ընդունարանին մէջ: Մենք տեսնք սակայն որ Հայոց գլխի երկայնութիւնը առ հասարակ բնականոն աճած է, նշմարեցինք միաժամանակ հարիւրական բաւական մեծ համեմատութիւն մը, ուր այդ զարգացումը չէ իրագործուած, եւ այդ պարագան պէտք է վերագրենք յետագլխի տափակութեան, խափանիչ երեւոյթ մը որ հայ գլխի կամ գանգի վրայ բաւական յաճախ կը հանգիպի: Շանտր³⁷, որ 62 հոգւոյ գլխաձեւն առած է, կ'ըսէ թէ անոնցմէ 28ը, այսինքն 45%՝ բնականոն գլուխ ունին, զազաթի ու յետագլխի գծերը միօրինակ բոլորաձեւ կ'իջնեն ծոծրակին վրայ. 19 հոգւոյ քով, որ է 30%, յետագլուխը ծոծրակէն փոքր կարկանդակով կը բաժնուի, ու հարթ գծով չեղակի կը փութայ զազաթը ուր բարձրակէտ կը

կազմէ գահավիթօրէն իջնելու համար ճակատին վրայ. մինչ փոքր թիւ մը՝ 15 հոգի (25%) ունի լիովին տափակ յետագլուխ, կարծէք ծոծրակը շարունակուէր դէպի վեր, թէեւ զազաթը առաւել կամ նուազ ոլորտը կը պահէ դէպի ճակատը փոքրիկ վայրէջքով: Երկրորդ ու երրորդ տեսակ յետագլուխները կը բարեփոխեն գլխի երկայնութիւնը խափանելով անոր աճումը, հետեւապէս անոնց քով առաւելապէս կը զարգանայ գլխի լայնութիւնն ու բարձրութիւնը, որով կ'ունենանք բարձր գլխանիչ մը հաւասար կարճագլխութեան: Հեղինակին համաձայն այդ այլաձեւումը ոչ նուազ քան 70% կը տեսնուի³⁸:

Յետագլխի տափակութեան պատճառը ամէն պարագային կենսաբանական հիմք մ'ունի, ուր ցեղային յատկանիշի մը հնարաւորութիւնը կարելի չէ ի յառաջագունէ ուրանալ, բայց խնդիր է թէ արդեօք արտաքին արուեստական միջոցներ ձեռնմուխ չեն ըլլար ստէպ անոր գոյանալուն, կամ դէթ էսպէս չեն բարեփոխեր արդէն գոյութիւն ունեցող բնական ունակութիւնը: Ահա մեզ համար աւագ կարեւորութիւն ունեցող հարց մը, որ Հայոց գլխանիշի բարձրութեան բնական պատճառներուն քայլ մը կը մերձեցնէ: Դիտաւորեալ արուեստական միջոցներ ծանօթ են հին եւ նոր աշխարհներու բնիկներու քով³⁹: Բայց նաեւ անգիտակցական ազդակներ առ հասարակ մարդախօսներէն կ'ընդունուին ու կը հաստատուին: Այդ սկզբունքով այլաձեւումներն երկայնութեան ու լայնութեան տրամագծերը մեծապէս կրնան բարեփոխել, ըստ որում ճնշումը ճակատէն դէպի յետագլուխը եւ վարէն վեր ուղղուած կրնայ ըլլալ, այնպէս որ գլխի ամբողջ գանգուածը դէպի ետ մղուի, եւ կամ յետագլխէն դէպի ճակատը կրնայ գործել, որով գլուխը կ'աճի դէպի բարձրութիւն ու լայնութիւն: Վերջին պարագային կը նպաստէ մասնաւորօրորոցին մէջ տղուն հանգչելու դիրքը, ուր անշարժ կը մնայ երկար ժամանակ հորիզոնական ուղղութեամբ, ասով յետագլուխը աստիճանաբար կը տափակնայ, երբեմն միօրինակ, երբեմն աջէն կամ ձախէն միայն:

³⁸ Անդ, էջ 242:
³⁹ Հմտ. առ այս՝ Aichel, Die künstliche Schädeldeformation, Zeitschr. f. Morphologie und Anthr., 1933, XXXI/1. V. Lebzelter, Über die Herkunft der Schädeldeformationen, Forschungen und Fortschritte, 1933, VII. J. Imbelloni, Die Arten der künstlichen Schädeldeformation, Anthropos, 1930, XXII, S. 801—830 (ճոխ մասենագրութեամբ).

Շանտր⁴⁰ կ'ըսէ թէ Հայոց քով նման ճնշում մըն է, որ կը չափազանցէ ցեղին յատուկ կարճագլխութիւնը. «Յիրաւի մանուկ հասակէն զօրաւոր ճնշում մը կը բանեցուի ետեւէն դէպի առաջ ճնշելով յետագլուխն ամբողջ տարածութեամբ, այնպէս որ վերջինս կը մղուի դէպի բարձրութիւնն ու կողերը», ի մասս կողակրներուն որ կ'ընդարձակին, մինչ զազաթի յետագլուխէն եւ յառաջագլուխէն կարուածքներն (lambda եւ bregma) կը բարձրանան: «Ասով կ'ունենանք ոչ թէ ձուակերպներ առաւել կամ նուազ բարձր, այլ գունդեր երբեմն բրդածեւ, որոնց գլխանիշը կրնայ հասնիլ մինչեւ 90 եւ աւելի»: Շանտրի այս մեկնութեան կը յարի նշանաւոր մարդախօս Վ. Ջիուֆրիդա—Ռուլենդի⁴¹ Հայոց կարճագլխութիւնը եւ յարաբերական բարձրագլխութիւնը մեկնելու համար: Փր. Բոաս⁴² նիւեորքարնակ հայերու քով հարցուիորձ ըրած է այս տեսակէտէ եւ տեսած է թէ «անոնք այն համոզումն ունին, որ յետագլխի տափակութիւնը մանկան օրորոցի մէջ պատկերու դիրքէն յառաջ եկած է: Յառաջագոյն մանուկը մեծ խանձարուրքի մէջ կը դրուէր, որ մինչեւ ուտելը կը հասնէր եւ լեռներու վրայ գտնուած ձերմակ կաւով մը (քիլ) լաւ ցանուած կ'ըլլար: Լաթը յետոյ խանձարուրածեւ սրունքներու մէջէն բարձրութեան կը կապուէր եւ ծայրերը աջէն ու ձախէն զօրաւոր գլխին վրայ կը դրուէր: Անոր վրայ երկրորդ լաթ մը կու գար, որ թեւերը մարմնոյն վրայ կը ճնշէր: Եւ այսպէս կապուած մանուկը օրորոցին մէջ կոնակի վրայ կը դրուէր. բարձր ստէպ բուրդէ կ'ըլլար. մանուկը տեւականօրէն կոնակի վրայ կը պառկէր: Մանկաբարձը ծնունդէն անմիջապէս ետք մանկան գլուխը կը կլորցնէր եւ քթին արմատները կողմնակի կը սեղմէր»: Բոաս կը յաւելուէ՝ «Հաւանական չէ սակայն, որ այս ձեռնմխումները տեւական ազդեցութիւն ըրած ըլլան»: Անտարակոյս մենդելաւանութեան օրէնքով արուեստական միջոցները միայն անհաստական ձեւի փոփոխութիւն յառաջ կրնան բերել որ ցեղին վրայ չի կրնար ազդել. սակայն հարց կը ծագի հոս դիտարկութիւն արդեօք այդ արտաքին ձեռնմխումը բաւակա՞ն է Հայոց կարճագլխութիւնը մեկնելու համար:

Դժուար չէ մտածել թէ նորածինը խնա-

⁴⁰ Recherches, p. 50—51.
⁴¹ Contributo, p. 36—37.
⁴² Zeitschr. f. Ethn., 1924, S. 74—75.

մեղու դարաւոր աւանդութիւն մը սերունդէ սերունդ պէտք է պահուած ըլլայ հայ ընտանեկան յարկին տակ. ծանօթ է թէ ծննդաբերութեան եւ մանկաբարձութեան հետ ի՞նչ նուիրական, ստէպ բոլորովին սին արարողութիւններ կապուած էին, զորոնք մինչեւ վերջին ժամանակս հայ պարզամիտ գիւղացին ու քաղաքացին դեռ կը կատարէր. անտարակոյս այդ նուիրականութիւնը չափով մը կը ցոլանար նաեւ նորածինի խնամքին վրայ, ուստի կը միտինք հաստատել թէ այդ նիւթական խնամքը պէտք է հնադարեան ծագում ունենայ: Եւ սակայն այդ խնամելու կերպը իրապէս կ'օժանդակէ կարճագլխութեան զարգանալուն: Յիշատակեցինք վերը թէ դիտաւորեալ արուեստական միջոցներ անձանօթ չէին Հայոց. Հայաստանցին կը սիրէր կլոր գլուխ, ուստի կը ջանար նորածինին գլուխը այդ ուղղութեամբ այլափոխել: Նման արուեստական միջոցներ մեծ չափով կը գործադրուէին կարին եւ շրջակայքը, Տարօն եւ Բերեւա ուրիշ գաւառներու մէջ ալ: Աւելի ընդհանուր դործադրութիւն ունեցած են սակայն անգիտակցական միջոցները: Հ. Վիրխով⁴³ ճառասացութիւն մ'ըրած է Բերլինի մարդախօսական ընկերութեան 20 Դեկտ. 1924ի նիստին մէջ հայկ. օրորոցի մասին մարդախօսական տեսակէտէ եւ կը հրատարակէ օրորոցի երեք լուսանկարներ կովկասէն: Մենք հաւատացած ենք որ նա կը ներկայացնէ բնիկ հայկական օրորոցը. մակուկածեւ երկու ոտքերու վրայ հանգչած է փայտէ, աւելի սովորական՝ երկաթէ ամբողջ կազմածքը, ուր կը դրուի մանուկը, անոր վրայ օրորոցի մեծութեան՝ կ'երկարի շատ յատկանշական հաստատուն ձող մը: Մայրը երբ պէտք է ծիծ տայ մանուկին՝ կը ծնրադրէ օրորոցին քով, թեւը կը հանգչեցնէ ձողին վրայ ու մանուկը առանց տեղէն վերցնելու՝ կաթը կը ջամբէ: Փոքրիկը շատ քիչ անգամ կը խանդարի այդ իւր հանգիտ դիրքին մէջ, նա կը մնայ միշտ կոնակի վրայ պառկած, լիովին անշարժ: Եւ եթէ մանաւանդ բարձն ալ քիչ մը կարծր ըլլայ, ինչպէս բուրդէ, ամէնէն նպաստաւոր պարագան կը ստեղծուի նորածինին փափուկ գլուխը յետագլուխ մէջն տափակցնելու:

Բնական է, չենք ուզեր այսու հաստատել, որ Հայոց գլխի բաւական յաճախազէպ տափակութիւնը արդիւնք է պարզապէս մանուկը

⁴³ Zeitschr. f. Ethn., 1924, S. 208—211.

³³ Recherches, p. 72—73, 229—230.
³⁴ Contributo, p. 42—45.
³⁵ Cranica arm., p. 238—241.
³⁶ Martin, Lehrbuch, S. 698—699.
³⁷ Recherches, p. 52.

խնամելու կերպին. այդ տափակութեան հիմքը պէտք է ըլլայ կենսաբանական, ցեղային ու բոյն մէկ յատկանիշ. սակայն միւս կողմէ չէ կարելի ուրանալ թէ այդ խնամքի կերպը կը բարեփոխէ զգալապէս գլխի ձեւը: Ֆր. Բոաս⁴⁴ ինքնին իսկ Հայոց գլխուն վրայ փորձած է զայս. ինքը չափելով 75 ասիածին հայերու գլխի մեծագոյն երկայնութիւնը կը գտնէ իբր միջին 186⁵ հզրգմ., մինչդեռ 9 ամերիկացիներն այրերը (որ թէեւ շատ փոքր են թիւով) ունին 192⁹ հզրգմ., նոյնը 54 ասիածին հայուհիներու համար է 177¹ հզրգմ., մինչ 14 ամերիկացիներն ունին 183⁰ հզրգմ.: Այսպէս Ամերիկա ծնած հայերը գլխի մեծագոյն երկայնութիւն, յարաբերաբար ուռուցիկ յետագլուխ կը ցուցնեն, քան իրենց ասիածին ծնողքը, շնորհիւ խնամքի տարբեր եւ լաւագոյն կերպին: Ուստի երբ մերձեցնենք մենք այս իրողութիւնը ամբողջ հայ ժողովուրդին, պէտք է կրճատենք չափով մը այն բարձր գլխանիշը, որ կը վերագրուի մեզի, որպէս զի գտնենք բուն իսկ կենսաբանական հարադաս յատկանիշը:

Այս չափաւոր բարձր գլխանիշի եւ առաւելագոյն չափաւոր տափակ յետագլուխ յանգելէ ետքը կը մնայ լուծել բուն իսկ կենսաբանական պատճառները այդ երեւոյթին. որոնք սակայն շատ բարդ կը թուին ըլլալ: Կենսաբանութեան մէջ դեռ հարցեր կան որ լուսաբանութեան կը կարօտին, մեկնութեան կը սպասեն, եւ կ'ընդունին որ դեռ լիովին գոհացուցիչ լուծում մը չեն գտած մինչեւ հիմայ. սակայն դժուարութիւններու բազմութիւնը չի կրնար պատճառ ըլլալ ուրանալու ինքնին իրողութիւնը: Արդ իրողութիւն է թէ կարնագլխութիւնը տեւական ծաւալում կը ցուցնէ Եւրոպայի մէջ. այն գաւառամասներն, ուր յառաջագոյն միայն երկարագլուխ կամ միջագլուխ կը գտնէինք, հիմայ գերակշիռ կարնագլխութիւն կը տեսնուի⁴⁵: Ինչ մեկնութիւն ալ տրուի այս իրողութեան՝ միշտ հաստատուն կը մնայ, որ կարճագլուխները մեծագոյն տոկոսն ունենան մ'օժտուած են եւ յարմարելու աւելի մեծ ատակութիւն ունին քան որ երկարագլուխները. այս նպատակը զիրքը կ'օժանդակէ անտարակոյս որ երկարագլուխը հետզհետէ վանուի ու տեղի տայ կարճագլուխին՝ այն գաւառներու մէջ ուր երկուքին խառնուրդի հնարաւորութիւն կայ. ուրիշ խոս-

քով կարճագլուխը տիրող յատկանիշներ կը ցուցնէ երկարագլուխի վրայ⁴⁶:

Դժուար պիտի ըլլար ի յառաջագոյնէ մերժել, որ կարճագլուխութեան այս նպատակը զիրքը Հայոց գլխանիշի վրայ որոշ դեր մը չէ խաղացած, մանաւանդ որ մեր ուսումնասիրած նախորդ մարմնական ծանուցիչները, մասնաւորաբար հասակի մեծութեան տարբերութիւնները եւ մազի ու աչքի գոյներու բաժանումը բաւականէ աւելի ապացուցին, որ Հայոց ցեղային բաղկացութեան մէջ գլխաւոր երկու շոշափելի տարբեր տարբեր գոյութիւն ունին: Գլխի ծանուցիչները, մանաւանդ գլխանիշները աւելի միօրինակ զանգուած մը կը կազմեն, թէեւ ամէն պարագային չէ կարելի անտեսել միջագլուխներու բաւական մեծ համեմատութիւնը: Բայց արդեօք հոս եւս չէ՞ն երեւար այդ երկու տարբերութիւնը: Գլխի ծանուցիչները մի առ մի քննելով միայն հնարաւոր է պատասխան մը տալ այս հարցին. Պրոֆ. Վ. Բուսակ հայ գանդարանութեան նուիրած իւր գեղեցիկ երկին մէջ կատարած է այդ աշխատանքը: Հեղինակը չափելով կրկին ու կրկին իւր հաւաքածոյին 106 հայկական գանդերը (Թրքահայաստանէն), կը հասնի այն եզրակացութեան⁴⁷, որ անոնք, հետեւաբար Հայերը, չափաւոր կարնագլուխ են հակառակ ստէպ յեղ-յեղուած կարծիքին, որ զմեզ անդրկարնագլուխ կը նկատէր (Լուշան եւ ուրիշներ): Անդրագոյն քննութիւններ ցոյց կու տան որ չափերը միաձայն ընթացք մը չունին⁴⁸. Նկատած էր որ լայնութեան տրամագծերը համեմատաբար միշտ մեծ են բայց ստէպ ոչ աւելի քան միջագլուխ եւ նոյն իսկ երկարագլուխ գանդի մը լայնութիւնը, մինչ երկայնութեան տրամագիծը ստէպ փոքր էր, որով կարճագլուխութեան պատճառ կ'ըլլար: Ասոր հակառակ նկարագրական ծանուցիչները աւելի միօրինակութիւն կը ցուցնէին. հայ գանդին վրայ ստէպ նկատելի է յառաջակողմեան եւ յետագլուխեան մասերու անհամաչափութիւն. մինչ յառաջակողմեան մասը երկարագլուխ գանդերու կառուցումէք կը ցուցնէ՝ քունքի նեղութեամբ, ալանջի դերքով, յետսկողմը առանձնապէս կարնագլուխներու դրոշմը կը կրէ. իւր հաւաքածոյին գանդերը

էսպէս յատկանշական գծեր կը ներկայացնէին մանաւանդ շեղակի սահուն ճակատով, գագաթի անկիւնաձեւ կառուցումով եւ գէպի ծործորը գահալիժող տափակ յետագանդով: «Այն տպաւորութիւնը կը զգայ մարդ, կը գրէ հեղինակը, որ յետագանդի տափակ վար իջնող մասը, թէեւ երբեմն փոքր կարկառում մը կը ձեւացնէր, ըստ երեւոյթին չէր համապատասխաներ գանդի ընդհանուր կազմածքին եւ իբր արուեստական ճնշման մ'արդիւնք կ'երեւար: Այս տպաւորութիւնը աւելի կը զօրանար հայատիպ գանդին վրայ յաճախաբար անհամաչափութեամբ: Եթէ, կը գրէ հեղինակը, ստորին մասը քիչ մ'աւելի մեծ կարկառում մը ձեւացնէր՝ գանգը տիպար երկարագլուխ պիտի ըլլար իւր բոլոր մասերով»⁴⁹: Յիշեալ նկարագրական ծանուցիչները նկատելով իբր ծննդական (genetisch) եւ ցեղային յատկորոշիչներ, կը մնար վեր հանել ինքնին իսկ երկարագլուխ տարբեր իւր հաւաքածոյին մէջ: Սակայն ինչպէս շեշտեցինք արդէն գանդերու չափական տուեալները տիպերու այլազանութիւն կը ցուցնէին, որ մանաւանդ կորագծերու վրայ ալիսայտի խմբաւորումներ կը ձեւացնեն. ուստի յենով անոնց վրայ՝ իւր հաւաքածոյի գանդերուն մէջ կը գանդանէ չորս ենթատեսակներ, որոնց երկուքը կը գտնուին երկու ծայրերը՝ մին նուազ կարճագլուխ, մինչ միւսը՝ շեշտուած կարճագլուխ. իսկ երկու միջինները ասոնց միջեւ աստիճանաւորութիւն կը կազմեն, իբրեւ արդիւնք երկուքի խառնուրդին: Ինչպէս կը տեսնուի յատուկ երկարագլուխ գանդեր չկային իր հաւաքածոյին մէջ, թէեւ երկարագլուխ առանձնական ծանուցիչները դեռ կը տեսնուէին. Զ. Ռուշլերի սակայն իւր ուսումնասիրութեան մէջ կը նշանակէ 16⁷% երկարագլուխ եւ 30⁶% միջագլուխ հայկական գանդ. հետեւապէս անոնց գոյութիւնը թէեւ փոքր համեմատութեամբ, կասկածի տակ չ'իշխար⁵⁰: Պրոֆ. Վ. Բուսակ իւր տուեալներուն վրայ յենով կը գրէ գարձեալ. «Կը մնար եզրակացնել թէ սկզբնական երկարագանգ տարբը, այսպէս ըսելու համար՝ կլուած էր գերակշռութիւն ստացած կարնագանգի յատկանիշներին, եւ իբրեւ ուրոյն փոփոխակ մը այժմ գոյութիւն ունեցող տիպին մէջ երեւան չէր գար»⁵¹, գէթ իւր հաւաքածոյին մէջ: Ուրիշ խօսքով՝ հայ

գանդի ձեւերու եւ չափերու ուսումնասիրութիւնը կը յանգի այն եզրակացութեան, որ Հայոց գլխի կենսաբանական կազմութեան մէջ գործօն դեր կատարած են երկու տարբեր տարբեր, որոնց մին՝ կարճագլուխ է, իսկ միւսը՝ երկարագլուխ: Առաջինը՝ շնորհիւ իւր տոկոսն եւ տիրող յատկանիշերուն հասած է գերիշխանութեան ինչպէս եւրոպական գանդան երկիրներու մէջ, մինչ երկրորդը՝ այսինքն երկարագլուխ տարբը հետզհետէ գրեթէ անհետացեր է աննպաստ պայմաններու տակ: Հայոց մէջ հիմայ ստուար թիւով կարճագլուխներու կողքին՝ կան փոքր համեմատութեամբ միջագլուխներ, որոնք թերեւս երկու տարբերու արդիւնք են եւ անցման շրջանի մէջ կը գտնուին: Ի վերջոյ աւելցնենք, որ այդպէս կը մեկնէ նաեւ Գ. Հիւզինգ Հայոց գլխաձեւի յառաջագոյնութիւնը. ինքը կը գտնէ շեշտուած բարձր գլուխ մը, տափակ յետագլուխ եւ դմբեթաձեւ գագաթով, որ ինչպէս տեսանք բաւական յաճախաբար է Հայոց քով եւ կ'ըսէ «Ես կը մտածեմ այդ (գլուխը) իբր արդիւնք արիական (= երկարագլուխ) եւ հատական (= կարճագլուխ) արեան խառնուրդին»⁵²:

Հայոց գլխաձեւի այս առանձնայատուկ կառուցումը, բնական է, պիտի ազդէր գանդի տարրութեան վրայ, որ նուազ հետաքրքրական կէտ մը չէ: Նախորդ չափերուն մէջ մենք տեսանք, որ լայնութեան ու բարձրութեան մեծութիւնները Հայոց գլխուն վրայ գերակշիռ համեմատութեամբ լաւ աճում կը ցուցնեն, մինչ երկայնութեան տրամագիծը յաճախ միջակէն անդին չ'անցնիր, որով կ'ունենանք ստէպ գնդաձեւ գլուխներ: Այն հայ գլուխները, որոնք մեծագոյն երկայնութիւն կը ցուցնեն, ունին նաեւ իրապէս մեծ գանդի տարրութիւն քան երկարագլուխները, շնորհիւ իրենց բաղրատամբ մեծ լայնութեան. բայց որովհետեւ այդ երկայնութեան տրամագիծը ստէպ միջակ է, ուստի ուղեղի ընդունարանն ալ համեմատաբար միջակ ծաւալ մ'ունի: Պրոֆ. Բուսակ⁵³ կորագծով մը կը պատկերացնէ իւր չափերուն արդիւնքը, ուր 1360 cm³ ի վրայ 24 գանդ բարձրակէտ կը կազմեն, երկրորդ գագաթը կ'երեւայ 1430 cm³ ի վրայ 18 գանդով. մեծագոյն տարրութիւնն՝ 1630 cm³ կը ցուցնէ մէկ գանդ: Եթէ ընդու-

⁴⁴ Անդ, էջ 75:
⁴⁵ Martin, Lehrbuch, S. 682.

⁴⁶ Martin, Lehrbuch, S. 688.
⁴⁷ V. Bunak, Crania Armenica, Moskwa 1927, S. 221.
⁴⁸ Անդ, էջ 68—82:

⁴⁹ Անդ, էջ 221:
⁵⁰ G.-Ruggeri, Contributo, p. 34.
⁵¹ Crania Arm., p. 222.

⁵² Dr. G. Hüsing, Völkerschichten in Iran, Mitteilungen der Anthropolog. Gesellschaft in Wien, 1916, Bd. XXXVI, p. 236.
⁵³ Crania Arm., p. 69.

նինք եւրոպական ժողովուրդներու համար 1400 cm³ իբր միջին տարողութիւն⁵⁴, պիտի լսենք թէ Հայոց գանգի տարողութիւնը միջինն է: Ռուջլերի⁵⁵ արդիւնքները քիչ մը աւելի մեծ են, վասն զի ինչպէս տեսանք, անոր հաւաքածոյին մէջ երկար գանգեր դոյութիւն ունին: Հայոց գլխի կազմածքը սակայն, ինչպէս առ հասարակ ամէն կարծազլուսի դանդ, յարմարութիւնն ունի աւելի մեծ քանակութեամբ ուղեղ ընդունելու քան միեւնոյն մակերեսով երկարազլուսի դանդ մը: այդ կ'ուզէ արտայայտել անտարակոյս Նանսէն⁵⁶ երբ կ'ըսէ՝ (Հայոց գլխին) «այս կառուցուածքին պատճառաւ՝ գանգի տուփը առանց շատ ծաւալուն ըլլալու կրնայ մեծ քանակութեամբ ուղեղ պարփակել»: Աւելցնենք որ, թէեւ չէ ցուցուած աներկրայ ուղեղի մեծագոյն քանակութեան եւ մտաւոր կարողութեան միջեւ կապ մը, բայց կան նպաստաւոր փաստեր զայն հաւանական ընելու⁵⁷:

Դէմքի չափեր: Գլխի տրամագծի ազդեցութեան ենթակայ են դէմքի չափերը, գլխի բարձրութիւնն ու լայնութիւնը, բնական է, իրենց արտայայտութիւնը կը գտնեն դէմքի համապատասխան մեծութիւններու քով: ուստի մենք Հայոց քով գլխի լայնութեան տրամագիծը կատարեալ ածած գտնելով ի յառաջագունէ պիտի ենթադրենք արդէն, թէ դէմքի լայնութիւնն ալ նոյն աճումը պիտի ցուցնէ, հետեւապէս Հայերն յինքեան լայնադէմ ժո-

ղովուրդ պիտի ըլլան: Հայոց լայնադէմութիւնը կը հաստատեն հետեւեալ չափերը, սակայն պատճառը ուրիշ մեծագոյն ազդակ մը կը գտնենք:

Դէմքի լայնութիւնը կը ստանանք լծոսկրներու տրամագծէն. իսկ երկայնութիւնը կը չափուի առ հասարակ կզակի ծայրէն մինչեւ քիթոսկրի արմատը⁵⁸, բայց աւելի բարձր կէտ մը իբր միութիւն առնող մարդախօսներ պահաս չեն. այսպէս Շանտր⁵⁹ չափելով մինչեւ կնտիկ իբր միջին միութիւն կը գտնէ 139 հզրդմ. իսկ լայնութիւն 140 հզրդմ., որով դէմքի միջին ցուցիչ կ'ըլլայ 100:70: Է. Պիւսար⁶⁰, որ կը հետեւի Բրոկայի (Փրանս. դպրոց), կ'առնու մինչեւ ophryon կոչուած կէտը (կնտիկէն քիչ մը բարձր) եւ կ'ունենայ 148:74 հզրդմ., 141:82 լայնութեամբ եւ 105:65 դիմանիշով (indice facial): Ջաւախիչլիլի⁶¹ կը չափէ ամբողջ դէմքը մինչեւ մազերու սահմանը եւ 361 հոգւոյ համար կը գտնէ 184 հզրդմ. իբր միջին երկայնութիւն, 144 հզրդմ. իբր միջին երկայնութիւն, 144 հզրդմ. լայնութիւն՝ 78:2 ինքնուրոյն դիմանիշով: Չափուած կէտերու հեռաւորութեան անջրպետի համաձայն ձեռք բերուած արդիւնքներն ալ խոտորում կը ցուցնեն. սակայն նկատի առնելով այդ միութիւններու համեմատութիւնը՝ Ջաւախիչլիլի քով կը գտնենք 2% երկարադէմ, 62% միջադէմ եւ 36% լայնադէմ Հայեր: մինչ Շանտր ունի 11%՝ X—94 դիմանիշով, 22%՝ 95—99, 42%՝ 100—104, 25% 105—X. Ինչպէս կը տեսնուի հակառակ չափելու տարբեր մեթոդին՝ Հայերը բազմութեամբ 100էն վեր կը գտնուին, որ կը նշանակէ թէ մեծագոյն մասով լայնադէմ են: Ռուս մարդախօսներու⁶² արդիւնքը կը վկայէ ասոր. 85—90ի վրայ Տվարեանովիչ ունի 45:7%, Անսերով 50:4% եւ աւելի բարձր 91—96ի վրայ Տվարեանովիչ կը ցուցնէ 47:6%, իսկ Անսերով 33:9%: Դիմանիչի բարձրութեան պատճառը դարձեալ անդամի յատկանշական գծեր ունի իբր հիմք. Հայոց ճակատը երբեմն շատ սահուն երեւոյթ մը կ'ունենայ, ան՝ յարաբերութեամբ ամբողջ դէմքին աւելի կը միտի շե-

⁵⁴ Martin, Lehrbuch, S. 160, 164.
⁵⁵ Contributo, p. 42—47, հետեւեալ բաժանումը կը զննէ X—1200 cm³ = 4 գանգ, 1201—1300 cm³ = 8, 1301—1400 cm³ = 10, 1401—1500 cm³ = 13, 1501—1600 cm³ = 6, 1601—X cm³ = 1, p. 35.
⁵⁶ L'Arménie et le proche orient, Paris 1928, p. 262. Ներուի մեզի հոս յիշատակել ուղեղի մասին անդրազոյն ուսումնասիրութիւն մը՝ C. U. Ariens Kappers, Some correlations between the Brain and the Skull, London 1932, որը հեղինակը նոր ուղի մը կը բանայ կենսաբանական եւ մարդախօսական կրկին կարեւորութեամբ: Կը չափէ ուղեղի մեծագոյն երկայնութիւնը operculum orbitale մինչեւ polus occipitalis, եւ այն հորիզոնականի համաձայն կը ստուգէ Սիլվիան եւ Ռոլանդեան ճեղքերու (fissurae Sylvii et Rolandi) անկիւնները են. բայց հոս արդէն կը տեսնուին զգալի կերպով ցայտուն գծեր կարճադէմութիւնը յատուկ: մասնաւորապէս Հայոց վրայ Սիլվիան ճեղքի անկիւնը կը ստանայ 40°—45°50' իսկ Ռոլանդեան ճեղքի անկիւնը կ'ըլլայ 70°—77°. ասոր հակառակ երկարադէմութիւնները հազիւ 30° կը ցուցնեն առաջինը եւ 50° վերջինը: Ասով կ'ունենանք առանձին ծանուցիչ մը նաեւ ուղեղի համար, քանի որ ուղեղի ծաւալի ուսումնասիրութիւնները շատ յատկանշական եղբներ չեն ցուցնել երկարազլուսիներու եւ կարճազլուսիներու միջեւ:

⁵⁷ Տես Fr. Bachmaier, Kopfform und geistige Leistung, Zeitschrift für Morphologie und Anthropologie, XXVIII, 1928, S. 1—64.
⁵⁸ Martin, Lehrbuch, S. 160, 164.
⁵⁹ Անուշազրութեան սխալ մը կը գործէ Շանտր, որ էլ 44—45ի վրայ կը զննէ longueur ophryomen-tonnière, մինչդեռ իւր չափերը կը կրեն de la glabelle au point mentonnier վերտառութիւնը, էլ 53—56, ինչպէս որ Յուսաշարանի մէջ արդէն կը թուէ, էլ XII: ⁶⁰ Bull. soc., 1912, p. 357.
⁶¹ Archiv f. Anthr., 1925, S. 84—85.
⁶² Journ. russe d'Anthr., 1926, p. 22.

ղակի բարձրանալ գագաթը քան ուղղաձիգ դիմ մը կազմել: Բայց դիմանիչի բարձրութեան մեծագոյն ազդակն է կզակը, որ շատ ստեղծ Հայոց քով իւր լիակատար զարգացման չի հասնիր, այլ կը մնայ առաւել կամ նուազ վոքը, ներս ինկած. մինչդեռ ասոր հակառակ այտոսկրները աչքառու կերպով դուրս կը ցցուին որով յաճախ հայկական կիսադէմը (profil)՝ ձուածեւի կիսածիբը կը ներկայացնէ՝ ներս հակող ճակատով ու կզակով եւ ցցուող միջին դէմքով: Շատ յատկանշական է այս տիպը, որ ըստ երեւոյթին գաւառական դրոշմ՝ կը կրէ, վասն զի յաճախադոյնս կը հանդիպի կենդրոնական Փոքր Ասիոյ եւ Հայաստանի մէջ ծնած հայորդիներու քով: Շանտր⁶³ կզակի կարճ մնարուն արուեստական աղղակ մը կ'ուզէ ընդունել՝ առարկելով Հայաստանի մէջ հայուհիներու կզակի կապը: դժուար է սակայն, որ այդ աւանդական կապը յեղաշրջիչ ազդեցութիւն մը ունեցած ըլլայ, կրնայ առ առաւել չափազանցել կենսաբանական ունակութիւն մը, որ իբր ցեղային առանձնայատկութիւն մը կը նկատուի դէմքին վրայ:

Հայոց արեան ծանուցիչը: Մարդախօսական այս յատկանիշը դեռ շատ նոր սկսած է քննութեան առնուիլ եւ արդէն շօշափելի եղբներ ձեռք բերուած են ցեղերու զանազանութեան մէջ: Թէեւ մինչեւ օրս փոքրաքանակ Հայեր միայն ուսումնասիրուած են այս տեսակէտէ, սակայն շահեկան են ստացուած տուեալները, ուստի փոքրիկ ակնարկ մը կը կցենք հոս:

Արեան բաղադրութեան մէջ կը գտնուանուի չորս խմբաւորում՝ I O, II A, III B եւ IV AB անուանակոչումներով. այդ զանազանութիւնը ոչ միայն բժշկական տեսակէտէ կարեւոր է, այլ տեսնուած է, որ զանազան ժողովուրդներու քով այդ խումբերէն մին կամ միւր մեծագոյն յաճախութիւն կը ցուցնէ⁶⁴: Հայոց արեան մասին մեզի ծանօթ է միայն մէկ ուսումնասիրութիւն՝ Բժիշկ Է. Ալթուներանի գրչէն լոյս տեսած The Lancet թերթին մէջ (24 Դեկտ. 1927, էջ 1342), վերնագիրն է՝ A note on blood transfusion in Syria, with an analysis of 1149 blood groupings: Հեղի-

⁶³ Recherches, p. 45.
⁶⁴ Տես առ այս՝ L. Lattes, L'individualità del sangue nella biologia, nella clinica e nella medicina legale, Messina 1923. L. H. Snyder, Human blood groups: their inheritance and social significance. Amer. Journ. Physic. Anthr., IX, 1926.

նակը իւր հիւանդանոցին մէջ կրցած է քննել 438 հայերու, 589 արարներու (որոնց թուին մէջ են նաեւ թուրքեր, յոյներ են) եւ 122 հրեաներու արեան բաղադրութիւնը: Իր արդիւնքները հետեւեալ պատկերը կու տան⁶⁵.

	I O	II A	III B	IV AB
Հայ	23 (5%)	230 (53%)	56 (13%)	129 (29%)
Արար	32 (5%)	216 (37%)	129 (22%)	212 (36%)
Հրեայ	9 (7%)	46 (38%)	19 (16%)	48 (39%)

Ինչպէս կը տեսնուի Հայոց քով II A խումբը ամէնէն յաճախագէտն է՝ մինչեւ 53% համեմատութեամբ. այդ խումբը սակայն մարդկութեան մէջ ամէնէն յաճախ հիւսիսային եւ արեւմտեան Եւրոպա կը տեսնուի, այսպէս Գերմանացիներու քով 43:2%, Լեհերու քով 37:5%. մինչ III B տիրող է արեւելեան Ասիոյ մէջ. այդ խումբը Հայոց քով 13% համեմատութիւն կը ցուցնէ (Գերմանացիներու քով 12:5%)⁶⁶: Սակայն երկրորդ մեծագոյն յաճախութիւնը կը գտնենք IV AB խումբին մէջ՝ մինչեւ 29% համեմատութեամբ, մինչ Գերմանացիները 5:3%, Լեհերը 9:1% ունին. կ'երեւայ թէ արեւելեան խառնուրդի մը արդիւնքն է այդ: Բայց ստուգութեամբ կը տեսնուի թէ II A խումբի մեծագոյն յաճախութիւնը՝ արեան մեծագոյն յաճախութիւնը կը ցուցնէ հիւսիսային Գերմանացիներու հետ:

(Շարունակելի):

ԲԵԼԳԻՍ ԵՒ ՀԵՏԵՐԸ

Է. ԳԼՈՒԽ

Բելգիական Բրիւժ նաւահանգիստը: Հայոց երթեւեկութիւնը: Բելգիացի հնագէտ վանդէն Բիւսֆէի հետազոտութիւնները հայբելգիական յարաբերութիւնների մասին: Վանդէն Բիւսֆէի եւ Հ. Գ. Վ. Ալիշանի քղապատկերը: Ֆլամաներէն արձանագրութիւններ Հայոց մասին: Կիլիկիացի վերջին թագաւոր Լեւոն Զ-ը Բելգիայում: Բրիւժի անկումը:

ԺԱ.—ԺԵ. զարբերում, Բելգիայի ամբողջ առեւտրական եւ արդիւնաբերական գործունէութիւնը կենդրոնացել էր Ֆլանդրա գաւառում, որի նաւահանգիստն էր Բրիւժ (Bruge)

⁶⁵ The Lancet, 1927, p. 1343.
⁶⁶ K. Saller, Leitfaden der Anthr., Berlin 1930, S. 207, 251. Eickstedt, Rassenkunde und Rassen-geschichte der Menschheit, Bd. I, S. 62.